

1.2.6. Կապ

Հայաստանի Հանրապետությունում 2004թ. հունվար-հոկտեմբերին բնակչությանը, հիմնարկներին, կազմակերպություններին մատուցած ծառայություններից ստացված հասույթի ընդհանուր ծավալն ընթացիկ գներով կազմել է 44772.4¹ մլն.դրամ, որը 2003թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ համադրելի գներով աճել է 21.2%-ով: Նշված հասույթից բնակչությանը մատուցված ծառայությունների բաժինը կազմել է 24229.1 մլն. դրամ, որը 2003թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ համադրելի գներով աճել է 20.0%-ով:

¹ Հաշվարկված է առանց ավելացված արժեքի հարկի: